

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԱՐԵՊԱՇՏԱԿԱՆ ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ ՄԸ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ Ս. ԱԹՈՌՈՅՍ


Երուսաղէմի Ժառանգաւորաց վարժարանը եւ Ընծայարանը Պատրիարքութեանըս կրօնական դարբնոցն է, որ 176 տարիներ շարունակ Հայ Եկեղեցւոյ անդամստանին համար պատրաստած է տիպար հոգեւորականներ՝ կուսակրօն թէ ամուսնացեալ: Անոնցմէ շատեր կեանքի բերումով հեռացած են Սուրբ Աթոռէն եւ Հայ Եկեղեցիին իրենց ծառայութիւնը բերած են Հայաստանեայց Եկեղեցւոյ տարբեր թեմերու եւ Նուիրապետական Աթոռներու մէջ: Շատեր Սուրբ Աթոռէն հեռացած են ֆիզիքապէս, բայց հոգիի նուրբ թելերով մշտապէս կապուած մնացած են Սրբոց Յակոբեանց դարաւոր այս Հաստատութեան: Շատեր ալ տարիներ յետոյ այցելելով Երուսաղէմ՝ իջեւանած են Վանքի կամարներուն տակ եւ վայելած Պատրիարքութեանս բարիքները լիովին: Սակայն սակաւաթիւ են անոնք՝ որոնք ունեցած են Սուրբ Աթոռին շնորհակալ ըլլալու եւ իրենց կարողութենէն վանքին նուիրաբերելու այդ:

2019թ. Նոյեմբեր 17-ին, Երուսաղէմի Ժառանգաւորաց Վարժարանի երբեմնի սարկաւազներէն մին կը տօնէր արդէն իր քահանայութեան 20-ամեայ յոբելեանը Միացեալ Նահանգաց թեմի Ֆէյր Լոնի Սուրբ Ղեւոնդեանց Եկեղեցւոյ ծուխէն ներս: Եւ քանի որ Երուսաղէմի Հայոց Պատրիարքութիւնը մեծ տեղ գրաւած է Արժանապատիւ յոբելեար՝ Տ. Տիրան Քհնյ. Պօհաճեանի սրտին մէջ, ան փափաքեցաւ իր ծառայութիւնը գնահատող բոլոր նուիրատուութիւնները ուղարկել Պատրիարքութեանս Ժառանգաւորաց եւ Սբ. Թարգմանչաց վարժարաններուն:

Նուիրատուութիւններէն գոյացած ամբողջ 30,000 Ամերիկեան տոլարի վճարագիրը շուտով Արժանապատիւ Տէր Հօր կողմէ փոխանցուեցաւ Սուրբ Աթոռ, որուն համար կը յայտնենք մեր խորին շնորհակալութիւնը:

Թող Աստուած օրհնէ Արժանապատիւ Տէր Հայրը ու առողջ եւ ապահով պահէ իր ընտանեկան բոյնը, հեռու փորձութիւններէ եւ փորձանքներէ, որպէսզի ան կարենայ շարունակել իր ազգաշէն գործունէութիւնը ի սպաս մեր եկեղեցւոյ եւ ազգին:





ST. LEON ARMENIAN CHURCH

Սրբոց Ղեւոնդեանց Հայաստանեայց Եկեղեցի

Rev. Fr. Diran Bohajian
Pastor

Տ. Տիրան Քհնյ. Պօհաճեան,
Հոգևոր Հովիտ

18 Նոյեմբեր,
2019

Ամենապատիւ
Տէր Նորիհան Արք. Մանուկեան
Պատրիարք Հայոց Երուսաղէմի
Երուսաղէմ

Բարեխնամ Սրբազան Հայր,

Նախ խոնարհաբար կու գամ շնորհաւորել Ձերդ Ամենապատուութիւնը մեր Տիրոջ մերձաւոր կենսատու Սուրբ Ծննդեան տօնին առիթով: Ի սրտէ կը հայցեմ որ մեր Փրկիչը շնորհէ Ձերդ Ամենապատուութեան առողջութիւն եւ գործոց բարեաց յաջողութիւն:

Ես 1991-ին ընդունուեցայ Երուսաղէմի Ժառանգաւորաց Վարժարանէն ներս իբրեւ ուսանող եւ մէկ տարի սպասաւորեցի Սրբոց Յակոբեանց վանքին մէջ իբրեւ սարկաւագ: Քսան տարիներէ ի վեր իբր հովիւ կը ծառայեմ Միացեալ Նահանգաց Թեմի Ֆէյր Լոնի Սուրբ Ղեւոնդեանց Եկեղեցւոյ ծովսին:

Նոյեմբեր 17-ին մեր Սրբոց Ղեւոնդեանց Եկեղեցին պատուեց իմ 20-րդ հովուական տարեդարձը եւ իմ ձեռնադրութեան 26-րդ ամեակը:

Երուսաղէմի Պատրիարքութիւնը մեծ տեղ գրաւած է իմ սրտիս մէջ եւ այս է պատճառը որ փափաքեցայ եթէ նուիրատուութիւններ կատարուին ի պատիւ իմ ծառայութեան, անոնք բոլորը ուղարկուին Երուսաղէմի Սբ. Թարգմանչաց եւ Ժառանգաւորաց վարժարաններու կարիքներուն համար: Ահա սոյն նամակով այսօր կը ներկայեմ 30.000 վճարագիր մը:

Ընդունեցէք իմ որդիական սէրը ու հաւաստիքը, հայցելով առ Աստուած որ պարգեւէ Ձեզ ոյժ եւ կորով Ձեր մշտազբաղ պաշտօնին մէջ:

Մատչիմ ի համբոյր Ձերդ Ս. Աջոյն
Մնամ խոնարհ որդի՝

Տէր Տիրան Քհնյ. Պօհաճեան